Արձանագրություն N 3

ՀՀ Ազգային ժողովի 2026 թվականի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով
կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-26/9 ծածկագրով գնման ընթացակարգի
/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

13 հունվարի 2026թ.
ժամը՝ 10:30

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Թորոսյան, Տ.Ղազարյան, Վ.Քեռյան, Տ.Բադալյան*

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

*Նիստից բացակայում են Վազգեն Քեռյանը և Տիգրան Բադալյանը

1. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրեր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

1.1 Նիստը վերսկսվեց 13.01.2026 թվականին: Ի պատասխան ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի գրության, 12.01.2026 թվականին «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից ստացվել է պատասխան գրություն: Գնահատող հանձնաժողովը որոշեց շարունակել նիստը և ուսումնասիրել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերը:

1.2 Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց՝

- **Սոֆթ Թրեյդ ՍՊԸ-ի** հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ /Հավելված 1/ բացակայում է Մասնակցի ղեկավարի պաշտոնը:

eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ 1-ին չափաբաժնում «Տեխնիկական բնութագիր» սյունակում «..110-120լ., տարողությամբ ...» տոպրակի տարողությունը նշված է միջակայքով, անհրաժեշտ է հստակեցնել: 2-րդ չափաբաժնում «Տեխնիկական բնութագիր» սյունակում «25-30լ.,՝տարողությամբ ...» պարկի տարողությունը նշված է միջակայքով, անհրաժեշտ է հստակեցնել: 6-րդ չափաբաժնում Հրավերով սահմանված է Պատվիրատուի պահանջը՝ «Կոմետ կամ Պեմո լյուքս», սակայն Սոֆթ Թրեյդ ՍՊԸ-ի կողմից նշված է առաջարկվող ապրանքը «Silk Soft», անհրաժեշտ է ներկայացնել հրավերի պահանջներին համապատասխանող ապրանքը՝ «Կոմետ կամ Պեմո լյուքս»: 8-րդ չափաբաժնում «Տեխնիկական բնութագիր» սյունակում «..գլանի երկարությունը 168-178մ., ...թերթերի չափսերը (կտրվածքը) 11-13 սմ., լայնությունը՝ 9.5-10սմ, միջուկի (ստվարաթղթե գլանակի) տրամագիծը՝ 5.5-6սմ...» նշված են միջակայքերով, անհրաժեշտ է հստակեցնել: Բացակայում է «Զուգարանի թուղթ (դիսպենսերի համար):» նախադասությունը: 10-րդ չափաբաժնում «Տեխնիկական բնութագիր» սյունակում բացակայում է «Ավել սենյակային, բնական:» նախադասությունը: 12-րդ չափաբաժնում Հրավերով սահմանված է Պատվիրատուի պահանջը՝ «Դոմեստոս կամ Սիֆ», սակայն Սոֆթ Թրեյդ ՍՊԸ-ի կողմից նշված է առաջարկվող ապրանքը «Silk Soft», անհրաժեշտ է ներկայացնել հրավերի պահանջներին համապատասխանող ապրանքը՝ «Դոմեստոս կամ Սիֆ»: 13-րդ չափաբաժնում Հրավերով սահմանված է Պատվիրատուի պահանջը՝ «Էմսալ կամ Սիդոլյուքս», սակայն Սոֆթ Թրեյդ ՍՊԸ-ի կողմից նշված է առաջարկվող ապրանքը «Silk Soft», անհրաժեշտ է ներկայացնել հրավերի պահանջներին համապատասխանող ապրանքը՝ «Էմսալ կամ Սիդոլյուքս»: 14-րդ չափաբաժնում «Տեխնիկական բնութագիր» սյունակում բացակայում է «Սպունգ, աման լվանալու:» նախադասությունը:

- **ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻ Ա/Ձ**-ի հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ 3-րդ չափաբաժնում «Արտադրող» սյունակում անհրաժեշտ է նաև նշել ապրանքն արտադրող կազմակերպության կազմակերպաիրավական ձևը:

- **«ՅՈՒՆԻՓԵՔ» ՍՊԸ-ի** հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ /Հավելված 1/ բացակայում է Մասնակցի ղեկավարի պաշտոնը:

eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ 5-րդ չափաբաժնում «Ապրանքային նշան» և «Արտադրող» սյունակները ենթակա են շտկման, անհրաժեշտ է նկարագրել /նշել/ առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը և արտադրողը:

- **ԼԵՌՆԻԿ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ-ի** հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ 15-րդ չափաբաժնում «Ապրանքային նշան» և «Արտադրող» սյունակները ենթակա են շտկման, անհրաժեշտ է նկարագրել /նշել/ առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը և արտադրողը: «Տեխնիկական բնութագիր» սյունակում զուգարանի խոզանակի՝ «տրամագիծը՝ 10-12 սմ, բարձրությունը՝ 33-35 սմ:» նշված են միջակայքով, անհրաժեշտ է հստակեցնել:

- **Տիգրան Անանյան Հրանտի ԱՁ-ի** հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ 11-րդ չափաբաժնում «Տեխնիկական բնութագիր» սյունակում բացակայում է «Ցախավել բնական:» նախադասությունը: «Ապրանքային նշան» սյունակը ենթակա է շտկման, անհրաժեշտ է նկարագրել /նշել/ առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, Հանձնաժողովը որոշեց 13.01.2026թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ Սոֆթ Թրեյդ ՍՊԸ-ին, ՍՈՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ ԱՇՈՏԻ Ա/Ձ-ին, «ՅՈՒՆԻՓԵՔ» ՍՊԸ-ին, ԼԵՌՆԻԿ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄԻ Ա/Ձ-ին, Տիգրան Անանյան Հրանտի ԱՁ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 15.01.2026թ. ժամը 10:30-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Հարությունյան

անդամներ՝ _____ Վարդան Թորոսյան

_____ Տիգրան Ղազարյան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան